

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

(ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 25.10.2017 թ.,

Ք. Վանաձոր

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:
Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու
խմբակցության անդամներ

*Արսյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն
Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Միմոնյանը, Մոխակ
Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը և Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության
անդամներ

Արևիկ Լոքյանը :

Նիստից բացակայում էր՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության
ավագանու խմբակցության անդամ *Սեյրան Աղաբեկյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ
Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը , Հայկազ
Միմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ
Մարգարյանը, Կարեն Բեկյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ *Արկաղի Փելեշյանը,
Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ *Այծենիկ
Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Արթուր Օհանյանը, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ,
հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.20-ին նիստը հայտարարեց բացված:
Մինչ նիստի օրակարգին անցնելը, համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ վերջին շրջանում
թերություններ կային աղբահանության և քաղաքի սանիտարական մաքրման
իրականացման հարցում և ներկայումս գործուն քայլեր են իրականացվում իրավիճակը
բարելավելու ուղղությամբ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:
Միաձայն՝ 14 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ, ինչը նաև
օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. հոկտեմբերի 25-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

4. Վանաձոր համայնքի «Վանաձորի ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

5. Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Գ.Բաղյան

6. Վանաձոր համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին

զեկ. Ա.Օհանյան

8. Վանաձորի համայնքապետարանի շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

9. Վանաձորի համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

11. Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը լուծելու և Վանաձոր համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 35 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

12. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային և կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

13. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

14. Կարեն Ռուբենի Խաչատրյանին Վանաձորի «Լոդի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին

զեկ.՝ Ա.Գրիգորյան

15. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ՝ Վ.Գրիգորյանը:

Պարզաբանումներ ստանալու նպատակով զեկուցողին հարցեր ուղղեցին ավագանու անդամներ Արմեն Մատինյանը և Գայանե Քալանթարյանը:

Պարզաբանումներ ներկայացրին զեկուցողը և նիստը վարողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ՝ Վ.Գրիգորյանը:

Նիստը վարողին հարց ուղղեց ավագանու անդամ Արմեն Մատինյանը, քաղաքի ասֆալտապատման ընթացքի վերաբերյալ: Նիստը վարողը ներկայացրեց տեղեկություն ընթացքի վերաբերյալ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի «Վանաձորի ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝ *Գ.Մացակյանը*:

Ավագանու անդամ Գայանե Քալանթարյանը և Սեյրան Ղամբարյանը տեղեկացրին, որ ՀՀԿ խմբակցությունը նախապես քննարկել է այս հարցը, կան առաջարկություններ և հավաստեց, որ մարզադպրոցը լրացուցիչ ուշադրության կարժանանա 2018 թվականին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ՝ *Գ.Բաղյանը*:

Բուռն քննարկումներ կայացան ավագանու անդամների մասնակցությամբ, բազմաթիվ հարցեր և առաջարկություններ հնչեցին, որոնց վերաբերյալ պատասխաններ և պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը, աշխատակազմի քարտուղարը և զեկուցողը:

Ավագանու անդամներ Արմեն Մատինյանի, Գայանե Քալանթարյանի կողմից հիմնավորվեցին համայնքի ՀՈԱԿ-ներում աշխատակազմի օպտիմալացման և հաստիքացուցակների վերանայման անհրաժեշտությունը: Նիստը վարողը և զեկուցողը համաձայնեցին հիմնավորումների հետ և տեղեկացրին, որ դա անհրաժեշտ է և նպատակ ունեն համատեղ իրականացնել 2018 թվականին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ *Ա.Օհանյանը*:

Զեկուցողին քննարկվող որոշման նախագծի և դրան հաջորդող, սակայն քննարկվողի հետ անմիջական բովանդակային կապ ունեցող, որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումների նպատակով հարցեր ուղղեցին ավագանու անդամներ Խորեն Վարդանյանը, Արմեն Մատինյանը, Սեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Վահագն Ավագյանը:
Զեկուցողը և նիստ վարողը ներկայացրին պարզաբանումներ և պատասխանեցին հարցերին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ *Ս.Օհանյանը*:

Ձեկուցողը մանրամասն ներկայացրեց որոշման նախագիծը, ավագանիների ուշադրությունը հատուկ հրավիրելով այն հանգամանքին, որ սոցիալական աջակցություն ստացողները պարտավոր են լինելու պարտքեր չունենալ համայնքային բյուջեին, իսկ ուսման վարձի մասնակի փոխհատուցումը կտրվի այն ուսանողներին, ովքեր լինելով սոցիալապես անապահով ընտանիքներից, նաև կունենան ուսման բարձր առաջադիմություն:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

Նիստը վարողը հայտարարեց ընդմիջում՝ 10 րոպե տևողությամբ:
Ընդմիջումից հետո նիստը շարունակվեց ավագանիների նույն կազմով:

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքապետարանի շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ՝ *Վ.Գրիգորյանը*:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ՝ *Վ.Դավիթսյանը*:

Նիստը վարողը նախաձեռնեց քննարկումներ մանկապարտեզներում ծնողական վարձավճարների համահարթեցման և միասնական վճար սահմանելու վերաբերյալ: Նա ներկայացրեց իր տեսակետը և առաջարկեց վերանայել վարձավճարների չափը:

Քննարկումներին մասնակցեցին և առաջարկություններով հանդես եկան ավագանու անդամներ Արմեն Մատինյանը, Գայանե Քալանթարյանը, Հայկազ Մովսիսյանը, Խորեն Վարդանյանը, Վահագն Ավագյանը:

Քննարկումների ընթացքում պարզաբանումներ ներկայացրին նաև աշխատակազմի քարտուղարը, Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետը:

Ամփոփելով քննարկումները և դրանց ընթացքում հնչած առաջարկները, նիստը վարողն առաջարկեց փոփոխություն կատարել որոշման նախագծին կից թիվ 2 հավելվածի 8-րդ կետի մեջ և տնակային պայմաններում գործող մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար ամսական վարձավճար սահմանել 4 հազար դրամ, իսկ ոչ տնակային մանկապարտեզների համար՝ 5 հազար դրամ:

Նիստը վարողը թիվ 2 հավելվածի 8-րդ կետում կատարվող փոփոխությունների վերաբերյալ առաջարկը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 2 (Սիմոնյան Դավիթ, Մատինյան Արմեն) հաստատվեց առաջարկը:

Նիստը վարողը քվեարկության դրեց որոշման նախագիծը արդեն հաստատված թիվ 2 հավելվածում կատարված փոփոխությամբ:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 2 (Սիմոնյան Դավիթ, Մատինյան Արմեն) ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ՝ Վ. Դավիթավյանը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ - Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը լուծելու և Վանաձոր համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 35 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ՝ Վ. Դավիթավյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությանը, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային և կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝
Ս. Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությանը, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին

- Ձեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝
Ս. Աբովյանը:

Ձեկուցողին պարզաբանումներ ստանալու նպատակով հարցեր ուղղեցին Սեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը: Նիստը վարողը և զեկուցողը ներկայացրին պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությանը, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - Կարեն Ռուբենի Խաչատրյանին Վանաձորի «Լողի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին

- Ձեկուցեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ *Ս. Գրիգորյանը:*

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությանը, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

- Ձեկուցեց համայնքի ղեկավար, նիստը վարող *Ս. Ասլանյանը:*

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությանը որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել նոյեմբերի 23-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի նոյեմբերի 23-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ



ԱՐԹՈՒՐ ՕՉԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց



Է. Հովսեփյանը